ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«—» ———— 2024թ. **N___ Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի ավագանին որոշում է՝

1. Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածը լրացնել 113.1-րդ կետով հետևյալ բովանդակությամբ՝

«113.1. Քաղաքապետի երդման արարողության վրա Երևան քաղաքի բյուջեից հատկացվող գումարը չի կարող գերազանցել ՀՀ նվազագույն աշխատավարձի 2000-ապատիկը:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող 10-րդ օրվանից:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Տվյալ հարցի կարգավորումն ի սպառ բացակայում է գործող կանոնակարգում, ինչի պայմաններում նախորդ քաղաքապետի երդմնակալության վրա ծախսվել է 900 հազար դրամ (2018թ), իսկ գործող քաղաքապետի դեպքում՝ 87 մլն դրամ (2023թ):

Նման պայմաններում տվյալ կարգավորման բացակայությունը բերում է նման անհամաչափ ու անհիմն ծախսերի, որոնք չեն բխում Երևանի զարգացման և երևանցիների շահերից, ստեղծում են չարաշահումների մասին հիմնավոր կասկածների ու ռիսկերի լայն հնարավորություններ: Սույն որոշման ընդունումը բխում է Երևան քաղաքի բյուջեի միջոցների ռացիոնալ, տրամաբանված և կանխատեսելի եղանակով պլանավորելու և ծախսելու շահերից:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան